ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 53 - Ա

ՀՈՎԻԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2335 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ և 7-րդ կետերով և հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի 2026 թվականի մարտի 9-ի թիվ 18 գրությունը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. «ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Հովիկ Մնացականյանին 2026 թվականի մարտի 10-ին և 11-ին գործուղել ք. Երևան, հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների միջև 2026 թվականի «Սպորտլանդիա» մարզական միջոցառման համար անհրաժեշտ սպորտային պարագաները ձեռք բերելու նպատակով:
2. Հովիկ Մնացականյանի գործուղման հետ կապված ծախսերը (օրապահիկ, ճանապարհածախս և գիշերավարձ) կատարել «ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆինանսական միջոցների հաշվին:
3. Հովիկ Մնացականյանին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել հաշվետվություն՝ գործուղման հետ կապված ծախսերի և գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

Signed by: ARSENYAN VAHAGN 2708930639

Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

2026 թվական մարտի 10
ք.Եղեգնաձոր